# ԱՆԲԱՎԱՐԱՐ ԵՎ ՑԱԾՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ 2021

Քննարկված և հաստատված է
« Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի
Կառավարման խորհրդի 2021թ. ապրլի 14-ի N 4 որոշմամբ:

# ԱՆԲԱՎԱՐԱՐ ԵՎ ՑԱԾՐ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. Սույն կանոնակարգը սահմանում է «Երևանի մշակույթի և արվեստի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ Քոլեջ) ուսանողների կողից ուսումնառության ընթացքում անբավարար գնահատակն , վարք և առաջադիմություն ունեանալու հետ կապված հարցեր: Կանոնակարգը ուսանողների ուսումնառության հետ կապված կանոններն են, որոնք տարածվում են Քոլեջում ուսումնառություն ստացող հարաբերությունների մեջ գտնվող անձանց վրա:

Եթե ուսանողը ստուգարքներից, քննություններից, կուրսային աշխատանքից ստացել է անբավարար գնահատակն նրան կարող է թույլատրվել վերահանձնելու աբավարար գնահատականը երկու անգամ.

- ավարտական կուրսի եկրորդ կիսամյակում սովորող ուսանողը իր մասնագիտության համար սահմանված քննաշրջանի ավարտից հետո մեկ շաբաթվա ընթացքում անբավարար գնահատականը կարող է վերահանձնել միայն մեկ անգամ, իսկ մնացած դեպքերում ուսումնական կիսամյակի կամ ուսմնական տարվա քննաշրջանը ավարտվելուց հետո մեկ շաբաթվա ընթացքում կարող է վերահանձնել միայն եկու անգամ:

2. Քոլեջում ուսանողի , ուսումնառությունը դադարեցնելու հիմք կարող են հանդիսանալ՝

. անբավարար առաջադիմությունը,

3. Անբավարար առաջադիմության պատճառով դադարեցվում է այն ուսանողի ուսումնառությունը, որը՝

ա) ստուգարքներից, քննություններից, կուրսային աշխատանքի և պրակտիկայի պաշտպանությունից ստացել է երեք անբավարար գնահատական.

բ) նույն քննությունից կամ տարբերակված ստուգարքից կամ կուրսային աշխատանքի պաշտպանությունից 2 անգամ ստացել է անբավարար գնահատական.

գ) քննաշրջանի արդյունքում՝ սահմանված ժամկետում չի մարել ակադեմիական պարտքերը հաջորդ ուսումնական տարին սկսվելու առաջին տասնօրյակում (այդ թվում՝ պայմանական հաջորդ կուրս տեղափոխված ուսանողը ):

Ոչ ավարտական կուրսում սովորող ուսանողը երեք առարկայի քննությունից, ստուգարքից երկու անգամ անբավարար գնահատական ստանալու դեպքում նրա ուսումնառությունը դադարեցվում է քոլեջի տնօրենի հրամանով:

Ավարտական կուրսում , երկրորդ կիսամյակում սովորող ուսանողը երեք առարկայի քննությունից, ստուգարքից , պրակտիկայից անբավարար գնահատական ստանալու դեպքում նրա ուսումնառությունը դադարեցվում է քոլեջի տնօրենի հրամանով:

Ավարտական կուրսում , երկրորդ կիսամյակում սովորող ուսանողը նախաավարտական պրակտիկայից անբավարար գնահատական ստանալու դեպքում զրկվում են պետական քննությանը մասնակցելու իրավունքից քոլեջի տնօրենի հրամանով դադարեցվում է նրանց ուսումնառությունը:

Քոլեջ է տեղափոխվել այլ ուսումնական հաստատությունից և սահմանված ժամկետում չի հանձնել ուսումնական պլանների անհամապատասխանության հետևանքով առաջացած առարկայական / ակադեմիական/ տարբերությունները քոլեջի տնօրենի հրամանով դադարեցվում է նրանց ուսումնառությունը.

Ուսումնական կիսամյակում՝ ուսումնական պարապմունքներից ունի անբավարար առաջադիմություն, որի վերաբերյալ առկա է ուսումնակական մասի , ամբիոնի կամ կուրսղեկի կողմից համապատասխան ուսումնասիրություն ապա քոլեջի տնօրենի հրամանով դադարեցվում է նրանց ուսումնառությունը.

Նույն քննությունից կամ ստուգարքից կամ կուրսային աշխատանքի պաշտպանությունից երեք անգամ անբավարար գնահատական ստացած ուսանողներին կարող է տրվել վերահանձնման ևս մեկ հնարավորություն, եթե քոլեջի մանկավարժական խորհուրդ ուսանողի խնդրանքը բավարարող միջնորդություն է ներկայացվում.:

4.Քոլեջից ուսանողի ազատման կամ նրա ուսումնառության դադարեցման մասին հրամանը տալիս է քոլեջի տնօրենը: